

ՀԱՅ ԱՐՎԵՍՏԱՎԱՐԺՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ՝
ՆՈՒՐՈՒԱԾ ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐՈՒԱՆ

Թեմիս ենթակայ կազմակերպութիւններէն Հայ Արհեստավարժներու Միութիւնը (APN) Մայրերու Տօնին առթիւ յայտուկ ձեռնարկ մը կազմակերպած էր Միշըն Հիլլի մէջ գտնուող Արարատ Հայ Տարեցներու Տան մէջ:

Առաւօրեան ժամը 10:30ին Արարատ Տան մէջ Սուրբ Պատարագ մատուցել քարոզիչ Առաջնորդանիստ Մայր Տաճարի Կառուցման Աշխատանքներու Վերահսկիչ՝ Հոգ. Տ. Պարեպ Ծ. Վրդ. Երէցեան: Արարողութեան մասնակցեցաւ Արարատ Տան Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Դաւիթ Քհնյ. Զելվէեան: Իսկ Սուրբ Սեղանին սպասարկեցին Բրշ. Սրեփան Սրկ. Յովակիմեան եւ Բրշ. Արիս Սարկաւազ: Մեծ թիւով հաւարացեալներ Սուրբ Հաղորդութիւն ստացան:

Սուրբ Պատարագի աւարտին փոքրիկ ունեցաւ ճաշկերոյթ, որու ընթացքին գործադրուեցաւ կոկիկ յայտագիր մը: Սուրբ Պատարագին եւ ճաշկերոյթին ներկայ գտնուեցան Հայ Արհեստավարժներու Միութեան Վարչութեան անդամները՝ գլխաւորութեամբ Արեւնապետ Տիար Վահէ Աշճեանի: Տիկին Փոսթաճեան բարի գալուստ մաղթեց բոլորին: ՀԲԸՄ Սարտարապատ Պարախումբը իր հեղաճկուն պարերով խանդավառեց ներկաները: Բանաստեղծութիւն կարդացուեցաւ Միլվա Կապուրիկեանի կողմէ գրուած:

Հոգ. Տ. Պարեպ Ծ. Վրդ. Երէցեան, որ Առաջնորդ Սրբապան Հայրը կը ներկայացնէր, կարդաց Սրբապան Հօր պատգամը, որուն մէջ կը գրէր. «Հայց. Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Առաջնորդարանէն սիրոյ բիւր ողջոյններ կը յղենք Թեմիս կազմակերպութիւններէն Հայ Արհեստավարժներու Միութեան Արեւնապետներ՝ Տիար Վահէ Աշճեանին եւ Տիար Խաչիկ Մանուկեանին, վարչութեան կազմին եւ համայն անդամներուն, որոնք գեղեցիկ գաղափարը յղացած են Արարատ Հայ Տարեցներու Տան մէջ հաւաքուելով միասնաբար տօնախմբելու «Մայրերու Օր»ը: Ի սրտէ կը շնորհաւորենք մեր բոլոր մայրերը՝ քաջառողջութեան եւ արեւշափութեան լաւագոյն մաղթանքներով: Մեր բոլոր մայրերը արժանի են մեր սիրոյն եւ խոր յարգանքին:

Մեր կոչն է, որ հայ մայրերը որպէս մտափայտ ունենան Տիրամայր Սուրբ Աստուածածինը, որ մարդկութեան պատմութեան մէջ կը ներկայանայ որպէս ամէնէն ակնուական, խոնարհ եւ Սուրբ կինը: Իր խոնարհութեան եւ ունեցած առաքինութիւններուն շնորհիւ, ան արժանացաւ Աստուածամայր ըլլալու գերագոյն պատուին»:

Հայր Սուրբի օրհնութեան աղօթքով փակուեցաւ յայտագիրը: